ԿԱՐԾԻՔ

Արտակ Սուրիկի Խաչատրյանի «ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը և Ղարաբաղյան հակամարտությունը. ազգաբանական ուսումնասիրություն» Է.00.04. - «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ներկայացված ատենախոսական աշխատանքը երկարատև և խնամքով կատարված գիտական աշխատանք է, ուստի այն արժանի է թե՛ գնահատանքի, թե՛ դրվատանքի ու խրախուսման, որը կարիք ունի նաև առանձին մանր վրիպակների խմբագրման:

Աշխատանքը կոչված է բացատրելու ԽՍՀՄ, այսինքն՝ երբեմնի գերտերության ազգային քաղաքականության դերն իր ներքին տարածքում ընթացող, ցայժմ չլուծված, բայց արդեն շատ ջուր քաշած «Ղարաբաղյան հակամարտության» (իմա՝ Լեռնային Ղարաբաղի հայ-ադրբեջանական հակամարտության) առաջացման, թե՛ ձգձգման, թե՛ կարգավորման, թե՛ հրահրման, մի խոսքով՝ ինչ-որ դերակատարության մեջ: ԽՍՀՄ-ն, անշուշտ, կարևոր դեր է ունեցել ինչպես հայերի այս կամ այն տեսակի առաջացման մեջ, որպիսին սկսեց կամ շարունակեց հակամարտությունը, այնպես էլ ադրբեջանցիների նույնպիսի տեսակի կայացման գործում:* Գրականությունը, որն այս թեմայով հրապարակվել է անցած 3-4 տասնամյակների ընթացքում, հսկայական է, և հեղինակի կողմից մեծ մասով հիմնականում հղված է: Ափսոս, որ մի փոքր անտեսված է «եզն ընկավ, դանակավորները շատացան» ժողովրդական ասացվածքը: Կարծում եմ՝ ավելի շատ պետք է շեշտվեր, որ ԽՍՀՄ տարիներին, չնայած կուտակվող խնդիրներին, որոնք հանգեցրին 1988թ.-ին, որոշ բացառություններով հանդերձ, հակասությունները չէին հատում զանգվածային բռնության կարմիր գիծը:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ ԽՍՀՄ ազգային «ինտերնացիոնալ» քաղաքականությունը կառավարման հաջողված եղանակ էր, համեմատելի, թերևս, Ռուսական կայսրության ազգային քաղաքականության հետ: Ոմանք համեմատում են

---

* Նկատի ունեմ ազգերի մաս կազմող մարդկանց վրա մշակութային ներգործության առումը:

այդ քաղաքականությունը նույնիսկ Օսմանյան կայսրության միլլեթների համակարգի հետ: Խաչատրյանի աշխատանքում, և դա շատ հետաքրքիր է՝ նշմարվում է բազմազգ կայսրության ներքին ազգամիջյան կարգավորումների համեմատություն մերօրյա միջազգային իրավունքի հետ: Եթե ԽՍՀՄ-ն անկած չլիներ, կարելի էր այս համեմատությունը խրախուսելի համարել, բայց, ավաղ, անկախությունից հետո գործ ունենք միայն միջազգային իրավունքի հետ, դրանից բխող փոքր ազգերի անվտանգային բոլոր խնդիրներով:

Նախախորհրդային շրջանին աշխատանքում հատկացված է ավելի քան հիսուն էջ, եթե հաշվենք նաև երրորդ և չորրորդ գլուխներում համառոտ հետադարձ հայացքները Ռուսական կայսրության վարչաքաղաքական կառուցվածքին և կառավարման պրակտիկաներին: Մեր կարծիքով, խորհրդային շրջանին մինչև վերջ անդրադառնալն ատենախոսին խանգարել է ոչ այնքան նյութի և գրականության պակասը (այս առումով աշխատանքը, ինչպես նշվեց, ինքնաբավ է), այլ մեր հայագիտության մեջ սերտաճած «XIX-րդ դարի վերջ – XX-րդ դարի սկիզբ» բանաձևը, որը մեր ազգաբանության հիվանդությունն է, բորոտության նման մի բան, դժվար հաղթահարելի անգամ այնպիսի պատասխանատու հետազոտություններում, որպիսին այսօր քննարկվում է:*

Բարձր գնահատելով Ա. Խաչատրյանի աշխատանքը՝ միաժամանակ նշենք մի քանի նկատառում և դիտարկում.

1. Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ համակարգված ձևով ներկայացվեր Ղարաբաղյան հակամարտության, հայ-ադրբեջանական հարաբերությունների վերաբերյալ ադրբեջանական տեսակետը: Ատենախոսական աշխատանքում հեղինակն անդրադարձել է առանձին հարցերի վերաբերյալ

* Ի դեպ, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի Ելիզավետպոլի և Երևանի կայսերական նահանգների կազմում լինելու շփոթություն կա նա էջ 70, անուշադրության սխալ:

ադրբեջանցի հեղինակների աշխատանքներին, այդուհանդերձ, շարադրանքում դրանք ցրված են: Լավ կլինի հետագայում այն համակարգվի և լրացվի:

2. Ատենախոսական աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում ատենախոսն անդրադարձել է հայերի մոտ ադրբեջանցիների վերաբերյալ խորհրդային տարիների կարծրատիպերին: Կարծում ենք՝ օգտակար կլիներ, եթե ատենախոսն այդ համատեքստում անդրադառնար նաև 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո առկա փոփոխություններին:

3. Խորհրդային ազգային քաղաքականությունը, իհարկե, քննադատելի է, բայց ինձ հետաքրքրեց, որ ատենախոսը քանիցս նկատում է նավթ ունեցող Ադրբեջանի արտոնյալ լինելը՝ դրանից բխած չարաշահումներով: Միանգամայն արդարացի նկատառում է, բազմիցս նախկինում քննարկված, որ հիմա էլ, որպես հակառակորդ կողմի առավելություն նշվում է Ղարաբաղյան կոնֆլիկտի թնջուկի բաղկացուցիչների շարքում: Բայց այս փաստը իր տեղում չի քննարկվում, նաև՝ որպես ՀԽՍՀ համար նպաստավոր տնտեսական գործոն:

4. Արդարացի կլինի նկատել, որ այս կարգի թեմաները դժվար են տեղավորվում ատենախոսության շրջանակում: Թե՛ ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը, թե՛ Ղարաբաղյան հակամարտությունը շատ ընդարձակ թեմաներ են, իսկ երբ շաղկապում ենք միմյանց, ստացվում է գրեթե անսպառ մի ասպարեզ, որում, ըստ այս ատենախոսության, ազգաբանությունը նույնպես պետք է ներդրում ունենա: Այդպիսի ներդրում իհարկե հնարավոր է, բայց կարծում ենք, հեռանկարային է ատենախոսին խորհուրդ տալ ձեռնպահ մնալ այս աշխատանքը մենագրության տեսքով հրատարակելուց: Գլուխներից յուրաքանչյուրը կարող է մի քանի լուրջ գիտական հոդվածի հիմք դառնալ: Որքան էլ ատենախոսը փորձում է մնալ խորհրդային ազգային քաղաքականության շրջանակներում, ակնհայտ է, որ գործ ունենք անկախության սերնդի ոչ անտարբեր ներկայացուցչի հետ, որը խորությամբ ծանոթ է նշված երկու ասպարեզներում գիտական տարաբնույթ աշխատանքների, և կարող է սեփական լուրջ ներդրումն ունենալ դրանց հետագա մշակման ուղղությամբ:

Ներկայացված նկատառումներն ամենևին չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, դրանք առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար:

Վերջում կցանկանայի շնորհավորել ներկաներին այսպիսի ծանր խնդիրների հաջողված վերհանման կապակցությամբ: Մեզ դեռ ոչ մեկ անդրադարձ է սպասվում թե՛ ԽՍՀՄ ժառանգությանը, թե՛ Արցախի պատմաազգագրական մարզին: Այս աշխատանքում կան թե՛ ազգաբանական, թե՛ պարզապես մարդաբանական առումով հետաքրքիր բացահայտումների, անհայտն ու հայտնին հաշտեցնելու, համահարթեցնելու փորձեր, որոնք դրանց հեղինակին արժանի են դարձնում պատմական գիտությունների թեկնածուի՝ իր հայցած կոչմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Արտակ Արտաշի Դաբաղյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող,

պատմ. գիտ. թեկնածու Արտակ Արտաշի Դաբաղյանի ստորագրությունը

հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտքարտուղար,

պատմ. գիտ. թեկնածու Աստղիկ Ալեքսանդրի Բաբաջանյան

03 նոյեմբերի, 2023 թ.